



ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐԶԸ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ԿՈԶ Կ'ԸՆԷ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀՈԳԵԻՈՐ ՊԵՏԵՐ ԻՐԵՆՑ ԿԱՐԵԿՑՈՒԹԻՒՆԸ
Կ'ԱՐՏԱՅԱՅՏԵՆ

Երուսաղէմ.— Այսօր, Երուսաղէմի Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան կոչ ըրաւ աշխարհի բարի կամեցողութեան տէր մարդկանց, կատեցնելու համար Հայ Ժողովուրդի դէմ ուղղուած ջարդը:

Նոյն ժամանակ, Սուրբ Երկրի Քրիստոնէական հոգեւոր Պետերը կարեւոր հետազիր մը դրկեցին Սովետական Միութեան Նախագահ Միքայէլ Կորպաչովին, յայտնելով իրենց մտահոգութիւնը եւ յուսալով որ Ղարաբաղի հարցը կը գտնէ իր արդար եւ խաղաղ լուծումը:

Ամեն. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան հաղորդագրութիւն մը տուաւ մամուլին, տեղական եւ օտար թերթերու զանազան թղթակիցներու: Սոյն հաղորդագրութիւնը առաջինն է որ տեղի կ'ունենայ Երուսաղէմի Պատրիարքութեան պատմութեան ընթացքին:

Սրբազան Հայրը ըսաւ որ Երուսաղէմի Հայ համայնքը լուր ստացած է թէ Ղարաբաղի Հայերուն դէմ նոր զինուորական պայքար մը սկսած է: Ան ամբաստանած է Սովետական իշխանութիւնը որ լուռ կեցած է ընդդէմ այս ահաբեկումներուն, որոնց Հայերը ենթակայ են Ատրպէյճանի իշխանութեան կողմէ: Ան շեշտեց որ Ատրպէյճանի բանակը բնաջնջման քաղաքականութեան պատերազմ է որ կը վարէ Հայերուն դէմ, որոնք արդարօրէն կը պաշտպանեն իրենց պատմական իրաւունքները:

Սրբազան Հայրը Սովետական իշխանութեան կոչ ըրաւ, որ հետապնդէ եւ երաշխաւորէ կեանքերն ու կալուածները իր բոլոր քաղաքացիներուն:

Ան առաջարկեց Սովետական կառավարութեան, որ հանրաքուէ մը կատարուի որոշելու համար Ղարաբաղի ապագան, եւ կոչ ըրաւ քաղաքակիրթ աշխարհի բոլոր պետերուն եւ բարի կամեցողութեան տէր մարդկանց, վերջ մը դնելու համար Ղարաբաղի սպանդին:

Ան զգուշացուց որ աշխարհը պէտք չէ լուռ մնայ, երբ անդին քաղաքակիրթ ժողովուրդ մը աստիճանաբար կը զրկուի իր մարդկային իրաւունքներէն: Միեւնոյն ժամանակ կոչ ըրաւ համաշխարհային մամուլին, արթնցնելու համար աշխարհի խիղճը անպաշտպան Ղարաբաղի Հայութեան նկատմամբ, որոնք ներկայիս դժուարին կացութեան մէջ են:

Երեկոյեան, Պատրիարքը նախագահեց հոգեհանգստեան պաշտօնին, որ Ս. Յակոբեանց Միաբանութիւնը մասնաւոր աղօթք ըրաւ Ղարաբաղի մէջ անմեղօրէն ինկած Հայերու հոգիներուն: Այս արարողութեան հրաւիրուած էին Քրիստոնէական Եկեղեցիներու ներկայացուցիչներ եւ Երուսաղէմի օտար հիւպատոսներ: